

Կ. Ն. ԲԱՏԻԴԿՈՎ

Կոնստանդին Նիկոլաևիչ Բատիշչկովը Պուլինի նախորդ նշանառուր բանաստեղծներից մէկն է. Նա ծննդեց 1787 թ. Մայիսի 18-ին Ոլոգդալում. Սերում էր մի ազնուական տոհմից, որ շատ հոգոց ապրում էր սեփական Դանիլովսկօս գիւղում. այս նոյն գիւղում Բատիշչկովն անց կացրեց իր յանուկ տարիները. Եօթ տարեկան էր, որ մալրը մնուաւ. սա հոգեկան հիւանդութիւն ունէր, որ և ժառանգաբար անցաւ բանաստեղծին ու նրա մեծ քրոջը՝ 1797 թ. Նրան տուին Ժակինո անունով մէկի պանսիոնը Պետերբուրգում, որտեղից 1801 թ. անցաւ մի ուրիշ Փրանսիացու՝ Տրիտուիի պանսիոնը. Տանուվեց տարեկան հասակում Բատիշչկովը թողեց պանսիոնը և սկսեց եռանդուն կերպով ամեն կարգի ֆրանսիերէն ու ուսուելէն գրքեր կարդալ. Միաժամանակ նա խիստ մտերմացաւ իր քեռու՝ Միխայլի Նիկիտիչ Մուրովնի հետ. Սրա ազդեցութեան տակ Բատիշչկովն իրան տուաւ հին, զասական աշխարհի գրականութիւնն ուսումնամատիրելուն և դարձաւ Տիրուվի և Հորացիոսի երկրագու, որոնց և նմանում էր իր առաջին երկերը գրելիս. Մինոնի Մուրովնի ազդեցութեան տակ նա մշակեց ու նրբացրեց իր գրական ճաշակն ու գեղագիտական հոսառութիւնը.

Պետերբուրգում նա ծանօթացաւ այն ժամանակուար գրական աշխարհի ներկալացուցիչների հետ. մասնաւորապէս մօտեցաւ Գ. Ռ. Դերժավինին, Ն. Ա. Լովինին, Կ. Վ. Կապոնիասին, Ա. Ն. Օլենինին, կոմս Ա. Ա. Ստրոգանովին, Ի. Մ. Մուրովն-Ապոստոլին, Պ. Ա. Նիլովային և Ա. Պ. Կւաշինա Ասմարինսկին. Մանելով լուսաւորութեան նախարարութեան դեպարտամենտը նա մօտեցաւ իր մի քանի պաշտօնակիցներին, որոնք լարում էին կարտամզինի ուղղութեան և նրանց հետ հիմնեց «գրականութիւնը սիրողների ազատ ընկերութիւնը». Այս ժամանակիներն էին, որ նա առանձնապէս մտերմացաւ Ի. Պ. Պնինի և Ն. Ի. Գնեղիչի հետ:

1807 թ. Բատիւշկովը կամաւոր զօրքի (միլիցիա) շարքը մտաւ և մասնակցեց պրուսական արշաւանքին. Հէլլիսբերգի կռւում նա վիրաւորուեց և թողնելով զօրքը, ճանապարհ ընկաւ Ռիգա բժշկուելու. Այս արշաւանքի ժամանակ նա խիստ մտերմացաւ. Պետին

ետու սպանուեց Լէտցիդի ճակատամարտում։ Ռիգարում թատիւշկովը սիրեց օրիորդ Միւգէլին, որ այն տան տիրոջ աղջիկն էր, որտեղ նրան տեղաւորել էին բժշկուելու համար։ Սակայն այս վիպական արկածը ոչ մի լուրջ հետեւանք չունեցաւ։ Հետևեալ տարին (1808 թ.) Բատիւշկովը մասնակցեց Շուէդիալի դէմ մղած պատերազմին։ ու երբ պատերազմը վերջացաւ՝ թողեց պաշտօնը և գնաց իրավինների մօտ (1809 թ.), բայց ոչ թէ հօր մօտ, այլ խանտոնով՝ զիւղը նովգորոդի նահանգում, որտեղ ապրում էին նրա մեծ քոլրերը և տնտեսութեամբ էին պարապում։ Դրա պատճառն այն էր, որ 1807 թ. նրա հալրը երկրորդ անգամ ամուսնացաւ, և որովհետեւ հասած աղջիկները չէին ուզում իրանց խորթ մօր հետ ապրել, ուստի տեղափոխուեցին այս զիւղը, որ նրանց ժամանգութիւն էր ընկել մօրից։

Բատիւշկովը գիւղում շուտով սկսեց ձանձրանալ. սիրաց քաղաք էր քաշում. նրա տպաւորականութիւնը համարեա հիւանդական չափեր էր առել, միշտ աւելի ու աւելի նրան տիրում էր տաղառուկը և գալիք խելազարութեան նախաղդացումը.

Անմիջապէս 1809 թ. վերջին Բատիւշկովը եկաւ Մոսկուա և իր տաղանդի, փալլուն խելքի և բարի սրտի չնորհիւ շուտով լաւ բարեկամներ գտաւ Մոսկուայի այն ժամանակուալ հասարակութեան լաւագոյն շրջաններում։ Այստեղի բանագիրներից ամենից լաւ նա մօտեցաւ Վ. Լ. Պուշկինին, Վ. Ա. Ժուկովսկուն, Խչիս Պ. Ա. Վեպեմսկուն և Ն. Մ. Կարամզինին։ Այս նոր բարեկամները նրան ալնպէս կապեցին Մոսկուայի հետ, որ չնայած Պետերբուրգի բարեկամների թախանձանքներին և իր դրամական միջոցների պակասին՝ նա չէր ուզում թողնել ուռուս ազնուականութեան մալրաքաղաքը», ինչպէս ասում էր Կարամզինը Մոսկուայի համար՝ և գնալ Պետերբուրգ մի պետական պաշտօն և միանգամալն նիւթական ապահովութիւն ձեռք բերելու։ 1810 և 1811 թ. թ. Բատիւշկովը մասամբ ապրում էր Մոսկուալում, որտեղ նրա ժամանակը լաւ էր անցնում, մասամբ էլ գիւղում, քոլրերի մօտ որտեղ տաղականում էր։ Աերջապէս 1812 թ. սկզբին նա բոլորովին թողեց իր զինուորական ծառալութիւնը և գնաց Պետերբուրգ, որտեղ Օլենինի չնորհիւ պաշտօն գտաւ հասարակական գրադարանում։ Նրա կեանքը բաւական լաւ պալմանների մէջ մտաւ, թէև շարունակ անհանգիստ էր լինում ընտանիքի և իր մասին մտածելով. պաշտօնի մէջ շուտով բարձրանալու լուս չկար, իսկ ընտանիքի տնտեսութիւնը զնալով վատանում էր։ Զը մոռանալով Մոսկուալի ծանօթներին՝ Բատիւշկովն ալստեղ նոր ծանօթութիւններ կապեց մօտենալով Ի. Ի. Դիմիտրին, Ա. Ի. Տուրգենևին Պ. Ն. Բլուգովին և Գ. Վ. Դաշկովին։

Մինչ ալս, Նապոլէոնի գօրքը մտել էր Ռուսաստան և մօտենում էր Մոսկովալին, Բատիշչկովը գնաց Մոսկովա, որ Մուրովմի ալրուն ուղեկցի դէպի Նիժնի-Նովգորոդ։ Դրանից իտու նա նորից զինուորական ծառալութեան մտաւ և իրու գեներալ Ռաևսկու աղխատանտ մասնակցեց ուստ գօրքի հետ 1813—14 թ. արշաւանքին, որ վերջացաւ Պարիզի դրաւումով։ Արտասահման ընկնելը մեծ աղդեցութիւն արաւ Բատիշչկովի վրայ ապահեղ առաջին անզամ ծանօթացաւ ու սիրեց գերման գրականութիւնը։ Պարիզն ու նրա լիշտակարանները, մատենագարաններն ու թանգարանները նորնպէս անհետեանք չնմացին Բատիշչկովի տպաւորուող բնաւորութեան համար։ Բայց նա շուտով ուժգնապէս կարօտեց հալրենիքը և անցնելով Լոնդոն՝ վերադարձաւ Պետերբուրգ։

Ալստեղ պաշտօնի անախորժութիւններից դուրս՝ նրան սպասում էր մի աւելի լուրջ անլաջողութիւն, նա սիրեց Օլենինների տանն ապրող մի մատաղ աղջկա՝ Աննա Ֆէոդորովան ազգանունով, որը սակալն նոյն տեսակ զգացմունք չունէր դէպի Բատիշչկովը։ Սոսկայի լուսանատութիւնը սրտի մէջ, ծառալութեան գնաց կամեննեց-Պոդոլսկ, որտեղ մնում էր նրա զօրգունողը։ Մի տարու լետու նա վերջնականպէս թողեց զինուորական ծառալութիւնը և գնաց Մոսկովա։ Լետու անցաւ Գեաերբուրգ, որտեղ և գարձաւ «Արզամարտի»<sup>\*</sup> անդամ ու սերտ լարամբութիւն ունէր ամբողջ խմբի հետ։ մասնաւորպէս Պուշկինի հետ, որ նրան իր ուսուցիչն էր անուանում։ 1818 թ. Բատիշչկովը հասաւ իր վաղուց ցանկացած նպատակին։ նա պաշտօն ստացաւ Նէապոլիսկան ուսւ միսիալում։ Խալիխալում ճամբարդելը միշտ մի սիրած ցնորք էր եղել Բատիշչկովի համար։ բայց այժմ ուղեւորութելով ախտեղ նա համարեա անմիջապէս անտանելի ձանձրութ, տաղտուկ և անձկութիւն զգաց։ 1821 թ. մօտ հիսունդրիան ալն տեսակ չափեր առաւ, որ նա ստիպուած պէտք է թողնէր թէ ծառալութիւնը, թէ Լատան։ 1822 թ. մտաւոր Ընդունակութիւնների խանգարումը արտալարտեց բոլորովին որոշակի և ալնու հետև 34 տարի շարունակ նա տանջում էր համարեա ոչ մի օր գիտակցութեան չգալով, մինչև որ մեռաւ 1855 թ. լուլիսի 7-ին Ուսուցալում։ Նա թաղուած է Ուլոգդալից 5 վ. հեռու Սպասօ-Գրիլուցկի վանքում։ Կեռ. և 1815 թ. նա գրում էր Ժուկովսկուն իր մասին։ Ճնուած օրից հոգուս վրալ ես մի սև թիճ ունէի, որ տարիներիս հետ աճում ու աճում էր և քիչ էր մնում ամբողջ հոգիս սևացնէր։ Խեղճ բանսատեղը չէր նախատեսում, որ քիճն աճում է անդադար և ալնպէս շուտով բոլորովին պիտի մռալիցնի նրանոգին։

\* Գրական ընկերութիւն։ Ե. թ.

Բատիւշկովի թողած գրական ժառանգութիւնը երեք  
մաս է բաժանվում. բանաստեղծութիւններ, արձակ լողուած-  
ներ և նամակներ. Նրա առաջին փորձերը 1802 թուիցն են,  
երբ նա գրել է «ցնորք» ոտանառորք, Բատիւշկովի գրական  
գործունելութեան առաջին շրջանում երևեցած բանաստեղծու-  
թիւնների մէջ թափանցում է էպիկուրէիզմը. Նրանք շատ ո-  
րոշ կրում են այն անհոգ ու ազատ կեանքի դրոշմը, որ նա  
վարում էր այն ժամանակ Պետերբուրգում Ալդ Կարգի գրուած-  
ներ են. «իմ բանաստեղծութիւններին», «նամակ Քլօիին» և  
«նամակ Ն. Ի. Գննեղիչին», որտեղ հեղինակը նկարագրում է  
իր բարեկամին թէ ինչպէս է ժամանակն անցկացնում: «Խոր-  
հուրդ բարեկամներին», որտեղ այն միտքն է արծարծում, թէ  
պէտք է կեանքում խաղաղ վայելքներ ունենալ, ուրախ ու  
զուարճալի կեանք վարել, խառնելով իմաստութիւնը կատա-  
կին և ալլն: 1808 թ. առաջին անգամ Բատիւշկովը մօտից  
ծանօթանում է Տորկուատո-Ֆաստ ի երկերին, որի և Ազատուած-  
երուսաղէմը հէնց այն ժամանակ էլ սկսում է թարգմանել:  
1809 թ. առաջին փորձերն է անում արձակ ոճով գրելու.  
ալդ կարգից են. ալդի հատուած ուսու սպալի նամակներից,  
«Ֆինլանդիա», «Գովասանք առ քունը»: 1809 և 1810 թ.թ.  
նա գրեց մի շարք բանաստեղծութիւններ, որոնցով նմանում  
էր Պարնիին, Տիրուուլին, Պետրարկալին և Կաստի'ին: Միե-  
նոյն ժամանակն է գրել և «Տեսիլ Լետա գետի ակիերին»  
երգիծաբանութիւնը, որտեղ ծաղրի է հանում գրական հին  
դպրոցի ներկալսցուցիչներին. ալդ գրուածքը մեծ աղմուկ  
արաւ Պետերբուրգում: 1811 թ. է գրած «իմ պենատները»  
կենսալի բանաստեղծութիւնը, որ նուիրել է ծուկովսկուն  
և իշխ. Վեպեմսկուն: 1813 թ. գրել է «Իրգիշը սլաւեանո-  
րուաների զրոյդին» «զիւցազներգա-քնարերգա-կատակերգա-  
էպորորդիք օրէներգը», որ կատակաւոր նմանութիւն է  
Ժուկովսկու «Երգիշը ուսու զօրքերի բանակում» գրուած-  
քի: Բատիւշկովի հայրենասիրական զգացմունքն արտա-  
լաւուեց «Ուուսների Հոենուսից անցնելը» բանաստեղծութեան  
մէջ: Նրա ոգեկան վհատութիւնն ու մերժուած սիրու խոր-  
վիշտը ցոլանում են «Յուշեր»-ի մէջ (1815 թ.): Մուաւորա-  
պէս ալդ ժամանակներն էր, որ Բատիւշկովի մէջ առաջ եկաւ  
մի բեկումն. նա դարձաւ լուսետես և կեանքից հիասթափուած-  
շատորիանական ուղղութեամբ. ոդու ալս ծանր դրութիւնից  
նա ապաստան էր որոնում կրօնական զգացմունքի մէջ: Բա-  
ցի «Յուշերը» միենովն 1815 թ. են գրուել և հետեւալ բա-  
նաստեղծութիւնները, որոնց մէջ արտացոլում է բանաստեղծի  
այն ժամանակուալ հոգեկան տրամադրութիւնը, ընամակ Մու-  
րովս-Ապոստոլին», «Թափառողն ու նստակեացը», «անջա-  
տում», «արթնացում», «իմ գինին», «վերջին գարուն», «լուս»  
և «բարեկամին»:

Բատիւշկովի բանաստեղծական ստեղծագործութեան ամենակարենը լրջանը 1816 և 1817 թ.թ. են բանում, երբ 30 ամիսակ բանաստեղծը հասաւ կատարելութեան վերին աստիճանին ոտանաւորի շարքերը ողորկելում, երբ նա աւելի մօտ ծանօթացաւ գերմանական, Փրանսիական, իտալական և հինդասական գրականութեան, երբ հիմնդութիւնը դեռ ևս չէր մուալլեցրել նրա միտքը, նրա երկերին տալով միայն քնարական երանդ: Բատիւշկովի ալդ ժամանակուալ ոտեղջազբաժութեան ամենասիրուն արտապատութիւնն է «Մեռնող Տասսօն»: Նրա ամենալաւ երկերիցն են նաև «բարեկամի ստուերը», «նուիրած Պետինի լիշտակին», որ նրան մտերիմ մի սպալ էր, և Սատիսէնից արած մի փոխազդութիւն «Զուիցերիալում, գղեակի աւերակների վրայ» խորագրով: Հիւսիսի բանաստեղծութեան գծերին Բատիւշկովը լարութիւն տուաւ և Համարձակ Հորացի երգում:

Բատիւշկովի մատուցած ծառալութիւնը ոռւս գրականութեան ամին է, որ ժուկովսկու հետ միատեղ նա ոռւս ոտանաւոր շարքերին տուաւ ներդաշնակ գեղեցկութիւն, թեթև լութիւն և արտապատելու ուժ: Նրկուսն էլ, թէ Բատիւշկովը և թէ ծուկովսկին իրանց երկերով հարթեցին Պուշկինի, լերմոնտովի և նրանցից լետոյ եկող բոլոր ոռւս բանաստեղծների ճանապարհը: Ակդ բանը գիտակում էր և ինքը Պուշկինը որ Բատիւշկովին իր ուսուցիչն էր անուանում: Բատիւշկովի արձակ երկերից ամենից նշանաւորն են երկուսը: «Թեթև բանաստեղծութեան ազգեցութիւնը լեղուի վրայ» և «մի քանի խօսք կրօնի վրալ հիմնած բարուախօսութեան մասին»:

Բարդմ. Ն. Ա.